

Պետության կողմից դրամաշնորհի ձևով ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

ք. Երևան

11 « 03 » 2022 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամն, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն Ա.Պարզյանի, (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի բյուջեից «1117 Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» ծրագրի, «11004 Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման)՝ շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ 311,219,600.0 (երեք հարյուր տասնմեկ միլիոն երկու հարյուր տասնինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց

վերացման ողջամիտ ժամկետ և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելի գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մամիների հետ.

2.3.3. իրականացված Միջոցառումների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 3 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումները համապատասխանում են սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են.

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումներն իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանով սահմանված տնտեսագիտական

դասակարգման սինթետիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի

2.4.5. 2022 թվականի հաստատված եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսված սույն պայմանագրով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Միջոցառումների սպասարկման մասով տրամադրել հստակ բացվածք OBS, WBS և CBS (Organizational, Work, Cost breakdown structures) կազմակերպչական, աշխատանքային և ծախսերի բաշխման կառուցվածքներ, այսինքն՝ յուրաքանչյուր միջոցառման մասով առնվազն հետևյալը.

1) առաջադրանքները կամ անելիքները (Tasks),

2) նկարագրություն (Description),

3) մարդկային ռեսուրսներ (քանի անձ է դրանում ներգրավված (ծրագրի մենեջեր, ավագ ծրագրավորող, կրտսեր ծրագրավորող, որակի ապահովման մասնագետ, փորձարկող, այլն)) (HR), (PM, senior developer, junior dev., QA, tester etc.),

4) յուրաքանչյուր ներգրավված մասնագետի աշխատանքային ժամերի քանակը (HR hours),

5) ներգրավված մասնագետների աշխատավարձը (Labor costs) (մարդկային ռեսուրսների գծով ծախսերը),

6) ապրանքներ և ծախսեր (միավորներ, սարքավորումներ, տարածք, ճանապարհորդություն և այլն) (Materials & costs (units, equipment, space, travel etc.)),

7) այլ ֆիքսված և փոփոխուն ծախսեր, (Other fixed & variable costs):

2.4.9. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը մշակել և Նախարարությանը ներկայացնել ծառայությունների մատուցման գնառաջարկ՝ 2.4.8-րդ կետին համապատասխան, յուրաքանչյուր միջոցառման համար առանձին, միաժամանակ գույքագրելով և ԱՍՀՆ, ՄՄԾ և Կազմակերպության միջև հստակեցնելով միջոցառումների՝ նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվառումը համապատասխան բալանսներում:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսին մինչև դեկտեմբերի 20-ը՝ Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:

4.2. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը:

4.3. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունված է համարվում սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելու և կնքելու պահից:

5. Պայմանագրի գինը

5.1 Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 311,219,600.0 (երեք հարյուր տասնմեկ միլիոն երկու հարյուր տասնինը հազար վեց հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները:

5.2. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.3. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում,

վճարումն իրականացվում այն եռամսյակում որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է կողմերի միջև 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը):

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածները համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝	Կատարող՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011262020 ՀՎՀՀ 01506515 Նախարարության գլխավոր քարտուղար՝  Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ. Տ. 	«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ ք. Երևան, Կ. Ուլենեցու 68 Բանկի անվանումը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2480102656710000 ՀՎՀՀ 02602449 Գործադիր տնօրեն՝  Ա. Պարզյան (ստորագրություն) Կ. Տ. 

Ի Ր Ա Կ Ա Ն Ա Ց Վ Ո Ղ Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

«Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագիրն իրականացվում է հետևյալ չորս բաղկացուցիչ մասերով.

I. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում:
II. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀՆ) և նրա կառուցվածքային ստորաբաժանումների, Միանձնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ՄՍԾ) և վերջինիս տարածքային կենտրոնների, համակարգչային տեխնիկայի սպասարկում և վերանորոգման ծառայությունների մատուցում:

III. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակների, ՄՍԾ և վերջինիս տարածքային կենտրոնների միջև լոկալ և գլոբալ ցանցի սպասարկում, սերվերային համալիրի և առանձնացված սերվերների սպասարկում:

IV. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ստորաբաժանումների, գրասենյակների, ՄՍԾ և վերջինիս տարածքային կենտրոնների ինտերնետ հասանելիության ապահովում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող վեբկայքերի սպասարկում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

I. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրի I բաղկացուցիչ մասով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետք է սպասարկի և շահագործի սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգը, ինչպես նաև ապահովի դրանում առկա տվյալների պահպանման և փոխանակման անվտանգությունը, որը բաղկացած է ստորև ներկայացված ենթահամակարգերից՝

1. Տեղեկատվության փոխանակության ենթահամակարգ,

2. Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական ենթահամակարգ,
 3. ՀՀ զբաղվածության ոլորտի գործառնություններ իրականացնող «Գործ» տեղեկատվական ենթահամակարգ,
 4. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգ,
 5. Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ,
 6. Նախկին ԽՍՀՄ հնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993թ. ներդրված դրամական ավանդների փոխհատուցման տեղեկատվական ենթահամակարգ,
 7. Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ,
 8. Միամանակյա սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների ընդունարանների դինոմների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ,
 9. Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ,
 10. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ,
 11. Պրոթեզաօրոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական ենթահամակարգ,
 12. Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգ,
 13. Քաղաքացիական ծառայողների ատեստավորման հարցաշարերի տեղեկատվական ենթահամակարգ,
 14. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման ոլորտի «Էլեկտրոնային հաշմանդամություն» տեղեկատվական ենթահամակարգ,
 15. Սոցիալական արագ արձագանքման տեղեկատվական ենթահամակարգ,
 16. «Աշխատանք առանց սահմանների» միանական որոնողական համակարգի բաց հարթակ (www.workforall.am),
 17. Ընտանիքում բռնության դեպքերի վարման տեղեկատվական ենթահամակարգ (2022թ. շահագործման հանձնելու դեպքում),
 18. ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական շտապօգնության www.soc-bank.am հարթակ,
 19. Անհատական սոցիալական կաբինետ (2022թ. շահագործման հանձնելու դեպքում),
 20. Կամպիոնների հարթակ (2022թ. շահագործման հանձնելու դեպքում):
- 1. Տեղեկատվության փոխանակության ենթահամակարգի սպասարկման ծառայություններ**
- 1.1. Պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից վարվող տեղեկատվական համակարգերում առկա՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերում կիրառման համար անհրաժեշտ տվյալների ստացում ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ թվում՝
 - Բնակչության պետական ռեգիստրից՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշմամբ սահմանված կարգով,

- ՀՀ ոստիկանությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - Անշարժ գույքի կարգաստորի կոմիտեից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - Պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - ՀՀ ԱՍՀՆ Միասնական սոցիալական ծառայությունից:
 - ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
 - «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- «ԱԲՌԱ Քրեդիտ Օբեկորթինգ» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով:
- 1.2. Ինքնաշխատ եղանակով տեղեկատվության փոխանակությունն ապահովող ծրագրային գործիքների (մոդուլների) սպասարկում:
- 1.3. Պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված 1.1 կետում նշված տիպայնների մշակում և համապատասխանեցում անհրաժեշտ ձևաչափերին՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում կիրառելու նպատակով:
- 1.4. Պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկատվության համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում առկա տիպայնների հետ, այդ թվում՝
- 1.4.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում հաշվառված ֆիզիկական անձանց նույնականացում, ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տիպայնների համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում հաշվառված ֆիզիկական անձանց տիպայնների հետ՝ անձնագրային տիպայններում առկա անճշտությունների հայտնաբերման նպատակով:

1.4.2. ՔԿԱԳ մարմիններից ստացված՝ անձանց մահվան վերաբերյալ տեղեկատվության համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում հաշվառված անձանց տվյալների հետ, անձանց մահվան վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում համապատասխան շտեմարաններ,

1.4.3. Անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի, Պետական եկամուտների կոմիտեի և էլեկտրոնային կենսաթոշակների համակարգի տվյալների համադրում ՀՀ զբաղվածության ոլորտի գործառնություններ իրականացնող «Գործ», Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերի (անհրաժեշտության դեպքում, նաև այլ ենթահամակարգերի) տվյալների հետ՝ անճշտությունների հայտնաբերման նպատակով:

1.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ըստ անհրաժեշտության, ՀՀ ԱՍՀԼ համաձայնությամբ, տեղեկատվության տրամադրում պետական կառավարման համակարգի մարմիններին և այլ կազմակերպություններին:

1.6. Պարբերաբար և ըստ անհրաժեշտության վիճակագրական հաշվետվությունների ձևավորում և տրամադրում ՀՀ ԱՍՀԼ և ՄՄԾ-ին:

1.7. Պարբերաբար և ըստ անհրաժեշտության տարատեսակ վերլուծությունների իրականացում, արդյունքների տրամադրում ՀՀ ԱՍՀԼ-ին:

1.8. Տեղեկատվության համադրման ընթացակարգերի կատարելագործում, այդ թվում՝ տարբեր մարմիններից ստացվող տեղեկատվության կիրառման ընթացակարգերի ավտոմատացում:

1.9. Ոլորտային քաղաքականության մշակման և ֆինանսական կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում մատուցվող ծառայությունների բիզնես-գործընթացների ֆինանսական ռիսկերի գնահատման և կլաստերային վերլուծության իրականացում, առկա շեղումների դուրսբերում, ուսումնասիրում և ամփոփ հաշվետվությունների ներկայացում ՀՀ ԱՍՀԼ-ին :

2. Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ

2.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

2.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

2.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

2.4. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու արդյունքների պարբերաբար թափմացում և համայնում:

2.5. ՄՄԾ և նրա տարածքային կենտրոնների կողմից մուտքագրված ընթացիկ տվյալների ստուգում, ստուգման արդյունքում հայտնաբերված բացթողումների և թերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին՝ հետագա ճշգրտումներ իրականացնելու նպատակով:

2.6. Սահմանված ժամկետներում ենթահամակարգի տվյալների շտեմարանից տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին:

2.7. Ենթահամակարգից տեղեկատվության նախապատրաստում անհրաժեշտ տվյալներով՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 03.05.2016թ. թիվ 53-Ա/1 որոմանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

2.8. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ՀՀ ԱՍՀ-ի հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը և ՄՄԾ-ին:

2.9. Եռամսյա պարբերականությամբ ՀՀ ԱՍՀ նախարարի 02.05.2016թ. N 52 Ա/1 որոմանով հաստատված Ձև 1 և Ձև 2 հաշվետվությունների պահանջներին համապատասխան տեղեկատվության (ցուցակների) տրամադրում ՄՄԾ-ին:

2.10. Սահմանված ժամկետներում վիճակագրական տարեկան Ձև 7 և կիսամյակային Ձև 1 հաշվետվությունների տրամադրում ՄՄԾ-ին, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ՀՀ ԱՍՀ-ի հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը:

2.11. ԲՍՓՀ-ների նախորդ տարվա գործունեության տվյալների ամփոփ վերլուծության համար տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին՝ ըստ քանակների և տեսակարար կշիռների:

2.12. Հարակից տեղեկատվական շտեմարանների հետ համադրման արդյունքների կիրառում (անձնագիր, նույնականացման քարտ, ՀԾՀ, մահվան ամսաթիվ) և տրամադրում ՄՄԾ-ին՝ համապատասխան ճշտումներ կատարելու նպատակով:

2.13. Եռամսյակային պարբերականությամբ ժամկետանց գործերի վերաբերյալ տեղեկատվության (ցուցակների) տրամադրում ՄՄԾ-ին /ըստ ԲՍՓՀ-ների/:

2.14. Կիսամյակային տեղեկատվության /ըստ մարզերի, խմբերի և սեռի/ տրամադրում Վիճակագրական կոմիտեին ՀՀ ԱՍՀ-ին և ԱՄԾ-ին:

2.15. ՄՄԾ և տարածքային կենտրոնների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում տեղեկատվական ենթահամակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

2.16. Ենթահամակարգի շահագործման (կամ դիտման) նպատակով ՀՀ ԱՍՀ-ի պահանջով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

2.17. ՀՀ ԱՍՀ-ի և/կամ ՄՄԾ կողմից ներկայացված պահանջներին համապատասխան ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:

2.18. Ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների վերաբերյալ ուղեցույցների կազմում և տրամադրում ՄՄԾ-ին:

2.19. ՄՄԾ-ին համապատասխան ծրագրային իրավասության տրամադրում՝ Տեղեկատվական համակարգերի նոր օգտվողներ ալելացնելու և ապահովելացնելու համար՝ ըստ համապատասխան լիազորություններով հասանելիության մակարդակի: Ենթահամակարգում ՄՄԾ-ի ներկայացուցչին ծրագրային իրավասություն տրվում է բացարձակապես արձինիստորադիվ ղեկավարում իրականացնելու համար, որը չի ենթադրում ենթահամակարգում բովանդակային փոփոխություն կատարելու իրավասություն:

2.20. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

3. ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթները իրականացնող «Գործ» տեղեկատվական ենթահամակարգի սպասարկման ծառայություններ

3.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

3.2. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համայնում:

3.3. Տեղեկատվական շտեմարանից անհրաժեշտ ձևաչափով ամսական պարբերականությամբ տեղեկատվության ձևավորում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ՏՀ-ի տվյալների հետ համադրում իրականացնելու նպատակով, արդյունքների ձևավորում և տրամադրում ՄՄԾ տարածքային կենտրոններին (այսուհետ՝ ՄՄԾՏԿ)՝ ըստ փաստաթղթային հիմքերի շտկելու նպատակով:

3.4. Ենթահամակարգում հաշվառված անձանց անձնագրի տվյալների թարմացում:

3.5. Աշխատանք փնտրողների, այդ թվում՝ գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց ցուցակների նախապատրաստում ՄՄԾ-ում գրանցված կենսաթոշակատուների, Պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնբեղների տվյալների շտեմարանների հետ համադրման նպատակով, համադրման արդյունքների տրամադրում ՄՄԾ-ին՝ ամսական պարբերականությամբ:

3.6. Սահմանված ժամկետներում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 03.07.2014թ. N82-Ա/1 հրամանի 4-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, «Գործ» տեղեկատվական համակարգում առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում նույն հրամանի 1-ին կետի 5-րդ ենթակետով հաստատված՝ N 5 հավելվածով սահմանված ձևաչափով և տրամադրում ՀՀ ԱՍՀԼ:

3.7. Սահմանված ժամկետներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 03.07.2014թ. N82-Ա/1 հրամանի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նախորդ ամսվա ընթացքում ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներն իրականացնող «Գործ» ՏՀ մուտքագրված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ հաշվետվության ձևավորում նույն հրամանի N6 հավելվածով սահմանված ձևաչափով և տրամադրում ՄՄԾ-ին:

3.8. Շաբաթական պարբերականությամբ 2 անգամ հարմար աշխատանքի առաջարկից հրաժարված գործազուրկների, հավաքագրված թափուր աշխատատեղերի, աշխատանքի տեղավորվածների, համագործակցող գործատուների թվաքանակների վերաբերյալ ըստ ՄՄԾՏԿ-ների տեղեկատվության ձևավորում և տրամադրում ՄՄԾ(հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 18.08.2021 N Ն/ԳՀ-2-2/18012-2021 հանձնարարականը):

3.9. Շաբաթական պարբերականությամբ հավաքագրված թափուր աշխատատեղերի, աշխատանքի տեղավորվածների թվի վերաբերյալ տեղեկատվության ձևավորում և տրամադրում ՄՄԾ (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 02.02.2021թ. թիվ Ն/ԳՀ-2-1/2494-2021 հանձնարարականի 2-րդ կետը):

3.10. Աշխատանք փնտրողների, այդ թվում՝ գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության նախապատրաստում անհրաժեշտ տվյալներով՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 03.05.2016թ. թիվ 53-Ա/1 հրամանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

3.11. Զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգային ցուցանիշների ծրագրային ապահովում, դրանց համապատասխան տեղեկատվության ստացում և տրամադրում ՀՀ ԱՍՀ-ին:

3.12. Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկված անձանց ցուցակների նախապատրաստում ՄՄԾ անհատական հաշվառման «Պատնաս», Պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերի տվյալների տեղեկատվական շտեմարանների տվյալների հետ համադրման նպատակով, արդյունքների տրամադրում ՄՄԾ-ին:

3.13. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

3.14. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

3.15. Ծրագրային փոփոխությունների վերաբերյալ ուղեցույցների կազմում և տրամադրում ՀՀ ԱՍՀ-ին, ՄՄԾ-ին:

3.16. Ըստ ՄՄԾ-ի պահանջի՝ ենթահամակարգում սխալ մուտքագրված տվյալների ճշգրտում:

3.17. ՄՄԾ և տարածքային կենտրոնների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

3.18. Ենթահամակարգում կիրառման նպատակով Պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման ՏՀ-ից համապատասխան տեղեկատվության ձևավորում և թարմացում:

3.19. Ենթահամակարգի շահագործման (կամ դիտման) նպատակով ՀՀ ԱՍՀ պահանջով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

3.20. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ՄՄԾ-ին և ՀՀ ԱՍՀ-ին:

3.21. ԱՍՀ և/կամ ՄՄԾ կողմից ներկայացված պահանջներին համապատասխան ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:

3.22. ՄՄԾ-ին համապատասխան ծրագրային իրավասության տրամադրում՝ Տեղեկատվական համակարգերի նոր օգտվողներ ալելացնելու և ապավիտիկացնելու համար՝ ըստ համապատասխան լիազորություններով հասանելիության մակարդակի: Ենթահամակարգում ՄՄԾ-ի ներկայացուցչին ծրագրային իրավասություն տրվում է բացարձակապես արմինիստորատիվ ղեկավարում իրականացնելու համար, որը չի ենթադրում ենթահամակարգում բովանդակային փոփոխություն կատարելու իրավասություն:

3.23. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

4. *Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի սպասարկման ծառայություններ*

- 4.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:
- 4.2. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:
- 4.3. Տեղեկատվական շտեմարանում կրկնակի հաշվառվածների, անճշտությունների (ծնողների կարգավիճակի, հայտնաբերման պահին երեխայի իրավիճակի, երեխայի գտնվելու վայրի վերաբերյալ) հայտնաբերում և տրամադրում ՀՀ ԱՍՀԼ, մարզային բաժիններին և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններին՝ շտկումներ կատարելու նպատակով:
- 4.4. Տեղեկատվական շտեմարանից անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ձևակիրում և տրամադրում՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ ամսական համադրում իրականացնելու նպատակով: Համադրման արդյունքների ձևակիրում և տրամադրում մարզային բաժիններին և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններին՝ ըստ փաստաթղթային հիմքերի շտկումներ կատարելու նպատակով:
- 4.5. ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ համադրման արդյունքում ՀԾՀ-ի և նույնականացման քարտի տվյալների թարմացում:
- 4.6. Ենթահամակարգի «Կղիզ երեխա» և «Ողբեգման ենթակա երեխա» ենթաբաժինների համադրման արդյունքում որոշեզրկված երեխաների տվյալների հայտնաբերում և տրամադրում մարզային բաժիններին՝ «Կղիզ երեխա» ենթաբաժնից հաշվառումից հանելու նպատակով::
- 4.7. ՀՀ ԱՍՀԼ-ից ստացված գրությունների համաձայն «Երեխա որոշեզրկել ցանկացող անձինք» ենթաբաժնից, կենտրոնացված հաշվառման սահմանված ժամկետը լրացած, ինքնաշխատ եղանակով SՀ-ից դուրս գրված գրծերի վերականգնում՝ դատական վճիռների մուտքագրման նպատակով:
- 4.8. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:
- 4.9. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- 4.10. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:
- 4.11. Ծրագրային փոփոխությունների վերաբերյալ համապատասխան ուղեցույցների կազմում, տրամադրում մարզային բաժիններին, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններին, աջակցում համակարգի շահագործման գործընթացին:
- 4.12. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրականության տրամադրում:
- 4.13. ՀՀ ԱՍՀԼ, մարզային բաժինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակիցներին ու սոցիալական աշխատողներին խորհրդատվության տրամադրում ենթահամակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:
- 4.14. Սահմանված ժամկետներում ենթահամակարգում հաշվառված առանց ծնողական խնամքի մնացած՝ այդ թվում մանկատներում խնամվող և հաշվառումից /մանկատներից/ հանված երեխաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին:

4.15. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

4.16. Ենթահամակարգից անհրաժեշտ տվյալներով տեղեկատվության տրամադրում՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 03.05.2016թ. թիվ 53-Ա/1 հրամանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

4.17. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում:

5. Ընդանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկարկական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ

5.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում և համապատասխանեցում ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով նախատեսված դրույթներին:

5.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

5.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

5.4. Փաստագրված ընտանիքների տվյալների մշակում՝

- ՄՄԾՏԿ-ներից տեղեկատվության ամենամյա հավաքագրում /էլեկտրոնային կապի միջոցով/ և մշակում:

- Աննական պարբերականությամբ ենթահամակարգի և ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (այդ թվում՝ հանրային ծառայությունների համարանիշերի), տվյալների շտեմարանների համադրման արդյունքների կիրառում սահմանված ընթացակարգով և տրամադրում ՄՄԾ-ին՝ ՄՄԾ տարածքային կենտրոններին տրամադրելու և շտեմարաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

- Ենթահամակարգի տվյալների շտեմարանի թարմացում ՄՄԾՏԿ-ներից ստացված տվյալների հիման վրա՝ ՄՄԾ կողմից հաստատված նպատի գործերում կատարվող վերականգնումների ապահովում, նպատի միավորի հաշվարկում, ժամկետանց խմբերի հեռացում, կրկնակի հաշվառվածների հայտնաբերում և նպատի վճարման իրավունքի կասեցում տվյալների շտեմարանում:

- Աննամյա ընտանեկան, սոցիալական նպատի և միանվագ իրատապ օգնության վճարումների էլեկտրոնային ցուցակների ձևավորում:

- Ամենամյա եռամսյակային իրատապ օգնության էլեկտրոնային վճարումների ցուցակների ձևավորում:

5.5. Ամենամյա վճարումների էլեկտրոնային ցուցակների տրամադրում «Հայփոստ» ՓԲԸ-ին:

5.6. Ամենամյա վճարումների կանխիկ և անկանխիկ նախնական հայտերի, հաշվետվությունների պատրաստում, վճարման ռեեստրների ընդունում և հաշվառում:

5.7. Ամենամյա տվյալների շտեմարանի տրամադրում ՀՀ ԱՍՀ-ին և ՄՄԾ-ին:

5.8. Ամենամայսա էլեկտրոնային ցուցակների տրամադրում << ԱՍՀ-ին՝ 20.00 միավորից բարձր անապահովության միավոր ունեցող գազ և էլեկտրաէներգիա սպառող, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններից օգտվող ընտանիքների վերաբերյալ:

5.9. Ամենամայսա էլեկտրոնային տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին:

5.10. Խորհրդատվության և օժանդակության տրամադրում ՄՄԾ ՏԿ-ների աշխատակիցներին:

5.11. Ամենամայսա տեղեկատվության տրամադրում որոշակի բնակության վայր չունեցող ընտանիքների վերաբերյալ << ԱՍՀ-ին:

5.12. Ամենամայսա տեղեկատվության տրամադրում ՄՄԾ-ին նպաստառու ընտանիքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկանքների տրամադրման նպատակով՝ ՄՄԾ կողմից ներկայացված և կատարողի հետ համաձայնեցված ձևաչափով:

5.13. Համաձայն << կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Լ և N 284-Լ որոշումների ամենամայսա անկանխիկ միանվագ և պարբերական վճարման ցուցակների տրամադրում ՄՄԾ-ին և վճարող կազմակերպությունների կողմից վճարումների մասին տեղեկատվության ստացում ՄՄԾ-ից:

3.24. Ենթահամակարգի տվյալների շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

5.14. Ըստ անհրաժեշտության, ԱՍՀԼ համաձայնությամբ տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում համապատասխան մարմիններին:

5.15. ՄՄԾ-ին համապատասխան ծրագրային իրականության տրամադրում՝ Տեղեկատվական համակարգերի նոր օգտվողներ ավելացնելու և ապակտիվացնելու համար՝ ըստ համապատասխան լիազորություններով հասանելիության մակարդակի: Ենթահամակարգում ՄՄԾ-ի ներկայացուցչին ծրագրային իրականություն տրվում է բացարձակապես արմինիստորադիվ ղեկավարում իրականացնելու համար, որը չի ենթադրում ենթահամակարգում բովանդակային փոփոխություն կատարելու իրավասություն:

6. Նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993թ. ներդրված դրամական ավանդների փոխադրման գերեզկարգական ենթահամակարգի սպասարկման ծառայություններ

6.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում և համապատասխանեցում << կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով նախատեսված դրույթներին:

6.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

6.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

6.4. ՄՄԾՏԿ-ներից տեղեկատվության ամենամայսա հավաքագրում/էլեկտրոնային կապի միջոցով/ և մշակում:

6.5. Ենթահամակարգի տվյալների շտեմարանի թաղանթում՝ ՄՄԾՏԿ-ներից ստացված տվյալների հիման վրա, ՄՄԾ կողմից հաստատված ավանդի գործերում կատարվող վերականգնումների ապահովում տվյալների շտեմարանում:

6.6. Ենթահամակարգի տվյալների շտեմարանից՝ կրկնակի հաշվառված անձանց հայտնաբերում և կասեցում, երեք ամիս անընդմեջ չվճարված գործերի կասեցում, մուտքագրված ռեեստրների ստուգում, բազաների կառուցվածքային ստուգում, հերթական համարի ձևավորում:

6.7. Աննական պարբերականությամբ ենթահամակարգի և ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (այդ թվում՝ հանրային ծառայությունների համարանիշերի), ՔԿԱԳ մահացած անձանց տվյալների շտեմարանների համադրման արդյունքների կիրառում սահմանված ընթացակարգով և տրամադրում ՄՄԾ-ին՝ ՄՄԾ տարածքային կենտրոնների տրամադրելու և շտեմարաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

6.8. Կանխիկ և անկանխիկ վճարման նախնական հայտերի, հաշվետվությունների պատրաստում, ռեեստրների ընդունում և հաշվառում:

6.9. Ավանդի փոխհատուցման վճարումների էլեկտրոնային ցուցակների ձևավորում և տրամադրում «Հայփոստ» ՓԲԸ-ին:

6.10. Ենթահամակարգի տվյալների շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

6.11. Խորհրդատվության և օժանդակության տրամադրում ՄՄԾՏԿ-ների աշխատակիցներին:

6.12. Ամենամյա տվյալների շտեմարանի տրամադրում ՀՀ ԱՍՀԼ-ին և ՄՄԾ-ին:

6.13. Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287-Լ և N 284-Լ որոշումների ամենամյա անկանխիկ միանվագ և պարբերական վճարման ցուցակների տրամադրում ՄՄԾ-ին և վճարող կազմակերպությունների կողմից վճարումների մասին տեղեկատվության ստացում ՄՄԾ-ից:

6.14. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում ՀՀ ԱՍՀԼ-ին և ՄՄԾ-ին:

6.15. ՄՄԾ-ին համապատասխան ծրագրային իրավասության տրամադրում՝ Տեղեկատվական համակարգերի նոր օգտվողներ ավելացնելու և ապավորիվացնելու համար՝ ըստ համապատասխան լիազորություններով հասանելիության մակարդակի: Ենթահամակարգում ՄՄԾ-ի ներկայացուցչին ծրագրային իրավասություն տրվում է բացարձակապես արմինիստրատիվ ղեկավարում իրականացնելու համար, որը չի ենթադրում ենթահամակարգում բովանդակային փոփոխություն կատարելու իրավասություն:

7. *Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկագրվական ենթահամակարգի սպասարկման ծառայություններ*

7.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

7.2. ՀՀ ԱՍՀԼ ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, ՀՀ ԱՍՀԼ աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

7.3. Ենթահամակարգի նոր օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

7.4. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

7.5. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

7.6. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու բառարանների պարբերաբար թարմացում և համալրում:

7.7. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

8. Միասնական առցիալական ծառայությունների ցարածքային կենտրոնների ընդունարանների դիմումների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի սպասարկման ծառայություններ

8.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

8.2. Ենթահամակարգի տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

8.3. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

8.4. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

8.5. Ենթահամակարգի շահագործման (կամ դիտման) նպատակով ՀՀ ԱՍՀՆ պահանջով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

8.6. Ենթահամակարգում հաշվառված դիմումներում առկա սխալների շտկում՝ ՄՄԾ պաշտոնական գրությունների հիման վրա:

8.7. ՄՄԾ ՏԿ-ների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում:

